

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ



նշված տարածքները ժամանակավորապես գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ



ԼՂՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Տարածքը	29.12 քառ. կմ
ԼՂՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.3%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	714.11 հա
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	52310 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	100.0%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մայրաքաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ. վերջին	37.0%

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքն ու խոշոր քաղաքն է: Ունի շուրջ 52.3հազ. բնակիչ: Որպես քաղաքատիպ բնակավայր հայտնի է 1847 թվականից: Իսկ մինչև այդ հին հայկական բնակավայր էր՝ Վարարակն անվամբ, որն ունի ավելի քան երկուհազարամյա պատմություն: Հենց այս գյուղում 1840-ական թվականներին ստեղծվել է ռուսական բանակի զորակայան՝ ռազմական, վարչական, բնակելի շինություններով, որոնք էլ հիմք են հանդիսացել այժմյան քաղաքի ձևավորման համար: Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց և երկրամասը ինքնավար մարզ հռչակվելուց հետո, 1923 թվականին 26 կոմիսարների առաջնորդ, Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի հիշատակը հավերժացնելու համար այս բնակավայրը վերանվանվում է Ստեփանակերտ:

Մինչև 1978թ. մարզային վարչական կենտրոն լինելուց բացի, համանուն շրջանի կենտրոնն էր: 1978թ. հետո Ստեփանակերտի շրջանը վերանվանվում է Ասկերանի շրջան, իսկ շրջանի կենտրոնը դառնում է Ասկերան ավանը:

Ստեփանակերտը գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան նախալեռնային մասի ոչ մեծ հարթության վրա, Կարկառ գետի ձախափնյա գեղատեսիլ մասում: Շրջապատված է անտառներով, այգիներով, ունի մեղմ կլիմայական պայմաններ, հունվարի միջին ջերմաստիճանը -0.2°C է, իսկ հուլիսինը՝ $+22.4^{\circ}\text{C}$, օգոստոսինը՝ $+22.2^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումները տարեկան միջին հաշվով կազմում են 535 մմ:

Ստեփանակերտը ավտոճանապարհների կարևոր հանգույց է: Այստեղից սկսվում է Ստեփանակերտ-Շուշի-Բերձոր-Գորիս-Երևան, Ստեփանակերտ-Ննգի-Մարտունի, Ստեփանակերտ-Կարմիր Շուկա-Մարտունի, Ստեփանակերտ-Մարտունի-Հաղրուք, Ստեփանակերտ-Մարտակերտ, Ստեփանակերտ-Գրմբոն-Քարվաճառ ավտոխճուղիները:

Ստեփանակերտը ԼՂՀ նախագահի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ԼՂՀ Ազգային Ժողովն ու ԼՂՀ կառավարությունը, ԼՂՀ բոլոր նախարարություններն ու գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունները, տարբեր

միությունների, հիմնադրամների, դատաիրավական մարմինների, գանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում Լեռնային Գարաբաղի միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Ստեփանակերտը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական գլխավոր ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է:

2009թ. **մայրաքաղաքի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 49.3%
- շինարարություն 46.9%
- առևտուր 61.4%
- կապ 70.9%
- ծառայություններ 70.7%
- գյուղատնտեսություն 2.0%

Ստեփանակերտը նաև կրթության, մշակութային կարևոր կենտրոն է: 1920-ական թվականներին այստեղ բացվել է գյուղատնտեսական տեխնիկում, իսկ 1940-ական թվականներին՝ երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը կարճ ժամանակից հետո փակվել է: 1970-ական թվականներին բացվել է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժանմունքներով: Այստեղ մինչև 1993թ. գործում էր Կիրովականի մանկավարժական և Երևանի ճարտարագիտական ինստիտուտների մասնաճյուղերը: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի, Կիրովականի մանկավարժական և Երևանի ճարտարագիտական ինստիտուտների մասնաճյուղերի հիման վրա կազմավորվեց Լեռնային Գարաբաղի պետական համալսարանը (այժմ՝ Արցախի պետական համալսարան):

1932թ. բացվել է Ստեփանակերտի գրասիրտ քրոջ դպրոցը, որը 1940-ական թվականներին վերանվանվել է բժշկական ուսումնարանի, իսկ 1961թ.՝ երաժշտական ուսումնարանը:

1924թ. բացվել է ներկայիս Ստեփանակերտի հանրապետական գրադարանը: 1932թ. հիմնադրվել է պետական հայկական դրամատիկական թատրոնը: 1959թ. ԼԳՀ-ում գործում է հայկական երգի ու պարի պետական համույթը, որը մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում նաև Երևանում և Հայաստանի այլ բնակավայրերում:

2009. **մայրաքաղաքում** գործել են 145 արդյունաբերական, 125 շինարարական, 382 ծառայություններ մատուցող, 1094 առևտուր իրականացնող տնտեսավարող սուբյեկտներ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2005	2006	2007	2008	2009
Հաստատություններ, ընդամենը	36	37	37	36	34
<i>որոնցից՝</i>					
պետական նախադպրոցական	1	1	1	1	2
ոչ պետական նախադպրոցական	5	5	5	5	3
պետական հանրակրթական դպրոցներ	16	16	16	16	16
ոչ պետական հանրակրթական դպրոցներ	1	1	1	1	-
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	3	3	3	3	3
միջին մասնագիտական ուսումնական	3	3	3	3	3
պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	2
ոչ պետական բարձրագույն ուսումնական	6	7	6	6	5

2009թ. մայրաքաղաքում բնակչության ստացիոնար բուժումն իրականացվել է 9 հիվանդանոցային հիմնարկներում, որոնցում աշխատել են 224 բժիշկներ: Միջին բուժանձնակազմի թվաքանակը կազմել է 524 մարդ:

2009թ. մայրաքաղաքում գործել է 3 գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմել է 276.5 հազ. օրինակ:

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	52310	28045	24265
Ծնվածներ, մարդ	1114	549	565
Մահացածներ, մարդ	419	200	219
Ամուսնություններ	343	X	X
Ամուսնալուծություններ	48	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	19.1	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	776	382	394
հանրակրթական	7049	3539	3510
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	848	593	255
միջին մասնագիտական	1101	560	541
բարձրագույն	6542	3619	2923
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում(հաճախումների քանակը)	248366
Մարզիկներ, մարդ	1452	378	1074
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված),մարդ	3001	2792	209
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	12383
Հաճախումների քանակը տարվա ընթացքում, հազար			
գրադարան	144888
թատրոն	11633
համերգ	18150
թանգարան	38902
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը,տարվա ընթացքում	200

ԼՂՀ ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Ասկերան



Տարածքը	1192.82 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	10.4 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հունիսի 1-ի դրությամբ)	40979.58 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	41
Գյուղական բնակավայրեր	44*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	17732 մարդ
այդ թվում՝ քաղաքային	2156 մարդ
գյուղական	15576 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	12.2%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ. վերջին	12.5%

Ասկերանի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 12.5 %-ը:

2009թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում **Ասկերանի շրջանի տեսակարար կշիռը** կազմել է 3.9 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 21.3 %-ը, շինարարության՝ 7.5 %-ը, կապի ծառայություններից ստացված հասույթի՝ 6.5 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 7.5 %-ը, բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 6.4 %-ը:

Մինչև 1978թ. կոչվում էր Ստեփանակերտի շրջան: Ջբաղեցնում է Լեռնային Գարաբաղի Հանրապետության տարածքի կենտրոնական մասը, ընդգրկում է հիմնականում Կարկառ գետի ու նրա վտակների ավազանը: Մինչև 1996թ. սկիզբը, կապված պատերազմական, այնուհետև սոցիալ-տնտեսական դժվարին պայմանների հետ, շրջանի բնակչությունը նկատելիորեն նվազել է: Ասկերանի շրջանի տարածքի մի մասը (Կարկառի աջափնյա հատվածը) մտնում էր Արցախի Վարանդա գավառի, իսկ մյուսը (Կարկառի ձախափնյա հատվածը)՝ Խաչենի գավառի մեջ: Այս առումով այն Արցախ-Գարաբաղ

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

աշխարհի պատմության, մշակույթի ու տնտեսական կյանքի զարգացման մեջ առանձնահատուկ տեղ ունի:

Շրջանի մակերևույթը լեռնային է, խիստ կտրտված գետահովիտներով և անդնդախոր կիրճերով: Համարյա ամբողջապես անտառապատ է, ցածրադիր մասերում՝ թփուտածածկ: Համեմատաբար բարձրադիր է շրջանի արևմտյան հատվածը, որտեղով անցնում է Ղարաբաղի լեռնաշղթան, որի առանձին գագաթներ ունեն ավելի քան 2832 մ բարձրություն: Այստեղից էլ սկիզբ են առնում շրջանի տարածքով հոսող Կարկառ, Մեղրագետ (Բալլուջա), Բադարա, հյուսիսում՝ Քոլատակ գետերը: Շրջանը հարավային մասում սահմանակից է Հաղրութի, արևելյան մասում՝ Մարտունու և Աղդամի, արևմտյան մասում՝ Շուշիի և Քաշաթաղի, իսկ հյուսիսային մասում՝ Մարտակերտի շրջաններին:

Ասկերանի շրջանի տարածքում պահպանվել է հայ պատմաճարտարապետական 674 հուշարձան: Դրանցից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Ավետարանոց գյուղի՝ Վարանդայի մելիքության՝ Բերդավանի բազմաթիվ հուշարձանները, ինչպես նաև՝ Ասկերանի պաշտպանական պարիսպը:

Մասնավորապես, Ավետարանոց գյուղի նշանավոր հուշարձաններից են Ս.Աստվածածին եկեղեցին, Կուսանաց անապատ կոչվող հուշարձանախումբը, որի եկեղեցու զավիթը եղել է Վարանդա գավառի իշխանների՝ Մելիք Շահնազարյանների տոհմական դամբարանը, ինչպես նաև՝ շրջակայքի պարիսպները, տարբեր նշանակության հին շինություններն ու աղբյուրները: Շրջանի առավել կարևոր հուշարձաններից են Շոշկա վանքը, Սարուշեն գյուղի մոտ գտնվող Փիրումաշենի եկեղեցին, Շիկաքար բերդը, Բաֆֆու Աղբյուր-հուշարձանը (Գահրավ գյուղում), Կարկառ գետի վրա XVIII դարի սկզբներին կառուցված «Մազի Կամուրջը», ինչպես նաև Ստեփանակերտի մուտքի մոտ կանգնեցված «Մենք ենք, մեր սարերը» տուֆակերտ ինքնատիպ հուշարձանը: Հայաստանի ժողովրդական քանդակագործ, պրոֆեսոր Սարգիս Բաղդասարյանը այդ տուֆակերտ հուշարձանով հրաշալի մարմնավորել է դարաբաղցու հպարտությունը, անպարտելիությունը, հաստատակամությունը:

Շրջանի գյուղատնտեսությունը մասնավորապես մասնագիտացված է հացահատիկի և բանջարաբոստանային մշակության, այգեգործության, պտղաբուծության և անասնաբուծության ուղղությամբ:

Շրջանի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

2009թ. **շրջանում գործել** են 305 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից արդյունաբերության ոլորտում գործող 33, շինարարությունում՝ 17, գյուղատնտեսությունում՝ 8, առևտրում՝ 190, ծառայությունների ոլորտում՝ 57: Արդյունաբերական արտադրանքի 41.9 %-ն արտահանվում է ԱՊՀ և այլ երկրներ:

2009թ. շրջանում գործել է 38 ցերեկային դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 թանգարան, 1 հիվանդանոց, 4 գյուղական բժշկական ամբուլատորիա, 38 բուժկետ և այլն:

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	17732	9156	8576
Ծնվածներ, մարդ	270	139	131
Մահացածներ, մարդ	175	88	87
Ամուսնություններ	84	X	X
Ամուսնալուծություններ	12	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	24.0	X	X

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	194	85	109
հանրակրթական	2388	1222	1166
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	102	59	43
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում(հաճախումների քանակը)	31034
Մարզիկներ, մարդ	249	79	170
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	103	96	7
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	3969
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	3385
համերգ	2300
թանգարան	725
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը,տարվա ընթացքում	46

Ասկերան քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է, որն 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 2156 բնակիչ: Որպես բնակավայր ձևավորվել է 1920 թվականից հետո, իսկ 1982թ. դրան միացել է Գլիջբաղ գյուղը: 1967 թվականից համարվում է քաղաքատիպ բնակավայր, անվանումն առաջացել է զորանոց հասկացությունից: Որպես զորանոց հայտնի էր 18-րդ դարի կեսերից: Երկար ժամանակ եղել է Ռուսական զորքի նստավայրը: Պատմական մեծ կարևորություն ներկայացնող հուշարձանը Ասկերանի հանրահայտ բերդապարիսպն է, որը կառուցվել է 1760 թվականին:

Գյուղերից առավել նշանավորներն են՝ Ավետարանոցը, Ոսկեվազը, Նորագյուղը, Այգեստանը, Խաչենը, Շոշը, Խանաձախը, Դահրավը, Խնձրիստանը, Բաղարան, Խրամորթը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Ասկերան	ք.Ասկերան գ.Քյաթուկ	607 10	2156 22

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Ակնաղբյուր	գ. Ակնաղբյուր	185	645

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
2	Այգեստան	գ. Այգեստան	297	1083
3	Աստղաշեն	գ. Աստղաշեն	128	505
4	Ավետարանոց	գ. Ավետարանոց	257	1116
5	Արմենակավան	գ. Արմենակավան	16	75
6	Պատարա	գ. Պատարա	249	835
7	Բերքաձոր	գ. Բերքաձոր	52	178
8	Դահրավ	գ. Դահրավ	72	209
9	Դաշուշեն	գ. Դաշուշեն	35	111
10	Իվանյան	գ. Իվանյան	256	1198
11	Լուսաձոր	գ. Լուսաձոր	44	179
12	Խնապատ	գ. Խնապատ	225	1019
13	Խանցք	գ. Խանցք	63	237
14	Խաչեն	գ. Խաչեն	114	334
15	Խաչմաչ	գ. Խաչմաչ	49	200
16	Խնածախ	գ. Խնածախ	139	610
17	Խնձրիստան	գ. Խնձրիստան	206	825
18	Խրամորթ	գ. Խրամորթ	129	511
19	Ծաղկաշատ	գ. Ծաղկաշատ	58	183
20	Կարմիր գյուղ	գ. Կարմիր գյուղ	57	189
21	Հարավ	գ. Հարավ	95	327
22	Հիլիս	գ. Հիլիս	47	161
23	Հովսեփավան	գ. Հովսեփավան	37	175
24	Մաղաթաշեն	գ. Մաղաթաշեն	36	104
25	Մխիթարիշեն	գ. Մխիթարիշեն	22	85
26	Մոշխմիստ	գ. Մոշխմիստ	25	52
27	Նախիջևանիկ	գ. Նախիջևանիկ	68	212
28	Նորագյուղ	գ. Նորագյուղ	345	1463
29	Ներքին Սզմեք	գ. Ներքին Սզմեք	36	141
30	Շոշ	գ. Շոշ	178	634
31	Ջրաղացներ	գ. Ջրաղացներ	42	125
32	Ռև	գ. Ռև	33	105
33	Սառնաղբյուր	գ. Սառնաղբյուր գ. Դահրավ	28 4	120 8
34	Սարդարաշեն	գ. Սարդարաշեն	38	142
35	Սարուշեն	գ. Սարուշեն	102	371
36	Սղնախ	գ. Սղնախ	62	291
37	Վարդաձոր	գ. Վարդաձոր գ. Վարազաբուն	84 11	268 32
38	Վերին Սզմեք	գ. Վերին Սզմեք	11	33
39	Ուղտասար	գ. Ուղտասար	40	191
40	Փառուխ	գ. Փառուխ	17	63
41	Քռասնի	գ. Քռասնի	55	209

ԼՂՀ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Հաղրուք



Տարածքը	1876.76 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	16.4%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	108368.26 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	29
Գյուղական բնակավայրեր	40*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	12373 մարդ
այդ թվում՝ քաղաքային	3259 մարդ
գյուղական	9114 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	26.3%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ.	8.8%

ԼՂՀ Հաղրուքի շրջանն զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի հարավային մասը:

Այս շրջանի տարածքը հիմնականում համապատասխանում է պատմական Արցախի Դիզակի մելիքության տարածքին և աչքի է ընկնում հայկական պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններով: Դիզախայտ լեռան վրա կառուցված «Սպիտակ տաճարը» հինագույն ուխտատեղի է:

Հաղրուքի շրջանի տարածքում կա 486 հայկական պատմաճարտարապետական հուշարձան, դրանց մեծ մասը գիտաճանաչողական նշանակություն ունի: Առավել

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

հիշարժան են Տողասարի լանջին գտնվող Գտիչ կամ Քթեշ վանքը (XIIIդ.), Օխտը դռնի վանքը՝ Մոխրենես գյուղի մոտ (VIIդ.), Տող գյուղի Ս.Ստեփանոս, Ս.Հովհաննես եկեղեցիները, Մեծ Թաղլարի մոտ գտնվող Ճոխտ պռվածառի վանքը, Ս. Ամենափրկիչ եկեղեցին, Դրախտիկ գյուղի մոտ գտնվող Գրիգոր Նարեկացի եկեղեցին, Ծակուռի գյուղի Ծաղկավանքը, Հակակու գյուղի Ս.Աստվածածին եկեղեցին, Խանձածորի՝ Ս.Հովհաննես եկեղեցին, Թաղոտ գյուղի մոտ գտնվող Յոթ խաչ վանքը, Դիգափայտի հուշարձանները և այլն: Եզակի հետաքրքրություն է ներկայացնում Ազոխ գյուղի մոտ գտնվող քարանձավային համալիրը: Աչքի են ընկնում նաև Իշխանագետի վրա կառուցված և այժմ էլ գործող հնագույն կամուրջները, Մեծ Թաղլարի մոտ գտնվող Ծծախաչ քարանձավը, Մարիամաձոր գյուղից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող «Վնեսա դալա» բերդը, Խծաբերդի մոտ գտնվող Բերդ-Քարայրը և շատ հուշարձաններ:

Լեռնային կտրտված մակերևույթի պատճառով դաշտավարության համար նպաստավոր հողատարածքներն ավելի քիչ են: Այդ տեսակետից համեմատաբար նպաստավոր են Իշխանագետի ու նրա վտակների հովիտները: Կլիման ընդհանուր առմամբ չոր մերձարևադարձային է: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում +11.7⁰C, բարձրադիր վայրերում՝ - 1⁰C: Տեղումների միջին տարեկան քանակը 500-700մմ է:

Հաղորդի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.8 %-ը:

2009թ. շրջանի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն՝ 2.2%-ը, գյուղատնտեսություն՝ 12.9%-ը, շինարարություն՝ 5.6%, կապի ծառայություններից ստացված հասույթ՝ 5.0%-ը, մանրածախ ապրանքաշրջանառություն՝ 4.8 %-ը, բնակչությանը մատուցված ծառայություններ՝ 4.4 %:

Շրջանի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունը:

2009թ. **շրջանում գործել են** 205 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից՝ 34 կազմակերպություն և 171 անհատ ձեռնարկատեր:

2009թ. **շրջանում գործել է** 28 ցերեկային դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 հիվանդանոց, 4 գյուղական բժշկական ամբուլատորիա, 24 բուժկետ և այլն:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	12373	6295	6078
Ծնվածներ, մարդ	238	114	124
Մահացածներ, մարդ	135	74	61
Ամուսնություններ	48	X	X
Ամուսնալուծություններ	9	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	25.6	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	211	86	125
հանրակրթական	1912	931	981

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	67	48	19
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	22177
Մարզիկներ, մարդ	264	65	199
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	93	93	-
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	3128
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	4449
համերգ	1765
թանգարան	4959
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	58

Հաղործ քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է 1923 թվականից, որն 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 3259 բնակիչ: Տեղադրված է Գիզափայտի լեռնաճյուղերի գեղատեսիլ հովիտներից մեկում, այդ լեռնաճյուղերից սկիզբ առնող երկու գետակների միախառնման վայրում, որտեղից և առաջացել է բնակավայրի անվանումը («Հաղործ» նշանակում է գետամեջ):

Գյուղական բնակավայրերից առավել նշանավոր են Մեծ Թաղլարը, Հին Թաղլարը, Տողը, Տումին, Ազոխը, Դրախտիկը, Ուխտաձորը, Թաղուտը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Հաղործ	ք. Հաղործ գ. Տյաք գ. Վանք	872 30 41	3259 62 123

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Ազոխ	գ. Ազոխ	230	788
2	Ակնաղբյուր	գ. Ակնաղբյուր	84	302
3	Այգեստան	գ. Այգեստան գ. Մելիքաշեն	87 4	328 11

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
4	Առաքել	գ. Առաքել գ. Չորագյուղ գ. Սարալանջ	29 12 8	131 38 35
5	Առաջամուղ	գ. Առաջամուղ	18	83
6	Արևշատ	գ. Արևշատ	48	179
7	Բանաձոր	գ. Բանաձոր գ. Ցոր	54 7	148 25
8	Դրախտիկ	գ. Դրախտիկ	124	397
9	Թաղասեռ	գ. Թաղասեռ	143	501
10	Թաղուտ	գ. Թաղուտ	58	199
11	Խանձաձոր	գ. Խանձաձոր գ. Հայկավան	24 12	107 61
12	Խձաբերդ	գ. Խձաբերդ գ. Սպիտակաշեն գ. Արփագետիկ	47 2 4	132 11 17
13	Ծակուռի	գ. Ծակուռի	35	101
14	Ծամձոր	գ. Ծամձոր գ. Սարինշեն	24 10	42 14
15	Հարթաշեն	գ. Հարթաշեն	34	103
16	Հակակու	գ. Հակակու	41	150
17	Հին Թաղեր	գ. Հին Թաղեր	53	115
18	Մարիամաձոր	գ. Մարիամաձոր	67	222
19	Մեծ Թաղեր	գ. Մեծ Թաղեր	549	1518
20	Մոխրենես	գ. Մոխրենես	49	192
21	Նորաշեն	գ. Նորաշեն	51	159
22	Պլեթանց	գ. Պլեթանց գ. Ծաղկավանք	14 3	68 17
23	Ջրակուս	գ. Ջրակուս	56	241
24	Վարդաշատ	գ. Վարդաշատ	57	191
25	Տող	գ. Տող	206	718
26	Տումի	գ. Տումի	229	797
27	Ուխտաձոր	գ. Ուխտաձոր	118	360
28	Քյուրաթաղ	գ. Քյուրաթաղ	83	304
29	Կարմրակուճ	գ. Կարմրակուճ	53	124

ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Մարտակերտ



Տարածքը	1795.07 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	15.7%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	70139.49 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	42
Գյուղական բնակավայրեր	50*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	19636 մարդ
<i>այդ թվում՝</i> քաղաքային	4189 մարդ
գյուղական	15447 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	21.3%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.վերջին	13.9%

ԼՂՀ Մարտակերտի շրջանը զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի հյուսիսային մասը՝ Խաչեն և Քոլատակ գետերի ավազաններից դեպի հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ընդգրկում է պատմական Արցախի Ջրաբերդ գավառը և Խաչեն ու Գյուլիստան գավառների զգալի մասը:

Արցախի պատմության մեջ ունեցած դերով, այստեղ առկա հսկայական հնագույն պատմաճարտարապետական եզակի կոթողների քանակով, ինչպես նաև անգուգական բնությամբ **Մարտակերտի շրջանն** առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Բավական է նշել, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում մինչև այժմ հայտնի հայկական հուշարձանների շուրջ 40.0 տոկոսը գտնվում է Մարտակերտի շրջանում: Դրանցից հատկապես պատմական մեծ արժեք են ներկայացնում Գ-անձասարի վանքը, Դ-աղի կամ Խոթավանքը, Կարմիր, Երիցմանկանց, Եղիշե առաքյալի, Ամենափրկիչ, Հռոեկա,

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

Հավաստուկ վանքերը, Խոխանակաբերողը, Պառավածորի եկեղեցին, Կաշաղակաբերողը, Ջրաբերողը, Մելիք Բեգլարյանների ապարանքը, Վանքասարը և ճարտապետական այլ համալիրներ:

Առանձնահատուկ է հատկապես Գանձասարի վանքը: «13-րդ դարի հայկական ճարտարապետական հանրագիտարան», այսպես է գնահատել ռուս անվանի արվեստաբան Անատոլի Յակոբսոնը Արցախի պատմաճարտապետական կանգուն հուշարձանների գոհարը՝ Գանձասարի վանքը: Տեղանքը, ուր գտնվում է վանքը, ծովի մակերևույթից մոտ 1300մ բարձրություն ունի, շրջապատված է անտառներով ու այգիներով: Մարտակերտի շրջանի այն մասը, որտեղ Գանձասարի վանքն է, նախկինում մտել է Խամսայի հինգ մելիքություններից ամենահզորի՝ Խաչեն մելիքության տարածքի մեջ:

Գանձասարի վանքի կառուցումը սկսվել է 1216 թվականին և ավարտվել 1238-ին: Այն կառուցել է Խաչենի մեծ իշխան Հասան-Ջալալյանը (Հասան-Ջալալ-Գոլան): Հենց Հասան-Ջալալյան իշխանական տոհմի շնորհիվ էլ Գանձասարը մինչև XIX դարի սկիզբը եղել է Արցախի կրոնական, քաղաքական, մշակութային, տնտեսական, պաշտոնական խոշոր կենտրոնը: Գանձասարը երկար ժամանակ, XV դարից հետո, եղել է Աղվանքի կաթողիկոսության մշտական, անփոփոխ աթոռանիստը:

Մարտակերտի շրջանի տարածքով են հոսում երկու համեմատաբար խոշոր՝ Թարթառ (նախկինում՝ Տրտու) և Խաչեն գետերը՝ իրենց բազմաթիվ վտակներով:

Շրջանի տարածքը հարուստ է պղնձի, բազմամետաղների, ոսկու և այլ մետաղային հանածոների, բազալտի, տուֆի, կրաքարի պաշարներով:

Շրջանի տարածքի մեծ մասը անտառածածկ է: ԼՂՀ անտառների կեսից ավելին գտնվում է Մարտակերտի շրջանում: Անտառներում շատ տարածված են վայրի պտղատու ծառատեսակները:

Մարտակերտի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 13.9 %-ը:

2009թ. **շրջանի** տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

• արդյունաբերություն	40.2 %
• գյուղատնտեսություն	19.5 %
• շինարարություն	15.7 %
• կապ	5.2 %
• առևտուր	8.2 %
• ծառայություններ	5.1 %

Մարտակերտի շրջանի գյուղատնտեսությունը զգալիորեն տուժել է պատերազմական գործողությունների պատճառով: 8 բնակավայր, որտեղ հիմնականում զարգացած էր բուսաբուծությունը, ներկայումս ժամանակավորապես գտնվում է թշնամու վերահսկողության տակ, ևս 6-ը՝ ռազմական գործողություններից հետո բնակեցված չէ:

Արդյունաբերությունը ներկայումս շրջանում նշանակալից տեղ և դեր ունի: Շրջանում օտարերկրյա ներդրումները հիմնականում իրականացվել են արդյունաբերության ոլորտում: Հանրապետության արդյունաբերական արտադրանքում նշանակալի չափը ապահովվել է

«Բեյզ Մեթրս» ՓԲԸ-ի շնորհիվ, որը իրականացնում է գունավոր մետաղների արտադրություն: Շրջանը բացառիկ դեր ունի նաև էներգետիկայի բնագավառում: Այստեղ է գտնվում հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական ներուժը:

2009թ. **շրջանում իրականացված շինարարության** ծավալը կազմել է 5424.2 մլն դրամ (ընդամենի 15.7 տոկոսը), որից՝ 2396.2 մլն դրամը կամ 44.1 տոկոսը՝ արդյունաբերության ոլորտում, 1241.7 մլն դրամը կամ 22.9 տոկոսը՝ բնակ-կոմունալ տնտեսությունում:

2009թ. ԼԳՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին **շրջանում շահագործման են հանձնվել** 2708.8 քառ. մետր ընդհանուր (օգտակար) մակերեսով 43 բնակարան և առանձնատուն:

2009թ. **շրջանում գործել են** 40 ցերեկային դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 հիվանդանոց, 3 գյուղական տարածքային հիվանդանոց, 2 գյուղական բժշկական ամբուլատորիա, 38 բուժկետ և այլն:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ **Մարտակերտի շրջանում գործել են** 312 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից՝ 48 կազմակերպություն և 264 անհատ ձեռնարկատեր:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	19636	9978	9658
Ծնվածներ, մարդ	378	171	207
Մահացածներ, մարդ	229	113	116
Ամուսնություններ	144	X	X
Ամուսնալուծություններ	9	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	29.2	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	355	175	180
հանրակրթական	2882	1431	1451
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	106	57	49
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	63974
Մարզիկներ, մարդ	295	39	256
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	88	84	4
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ*	6505
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	12064
համերգ	808
թանգարան	700
Իրավական ոլորտ			

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	85

*) Ներառված են Շահումյանի շրջանի տվյալները :

Մարտակերտ քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է, որն 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 4189 բնակիչ: Տեղադրված է Կուսապատի Լեռնահովտից դեպի Արցախի հարթավայրը դուրս գալու սահմանագլխին: Հարթավայրից դեպի Արցախի լեռներն անցնող այս հատվածում հայերը հաճախակի են կատաղի մարտեր մղել տարացեղ հրոսակների դեմ, արդյունքում և ստացել մարտերում կերտված անունը:

Գյուղական բնակավայրերից նշանավոր են Հաթերքը, Մեծ Շենը, Վանքը, Առաջածորը, Ն. Հռոաթաղը, Չղրանը, Մոխրաթաղը, Կուսապատը, Վ. Հռոաթաղը, Դրմբունը, Քոլատակը, Ծմակահողը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010թ., մարդ
1	Մարտակերտ	ք. Մարտակերտ	1514	4189

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Աղաբեկալանջ	գ. Աղաբեկալանջ	50	164
2	Առաջածոր	գ. Առաջածոր	226	679
3	Գառնաքար	գ. Գառնաքար	35	136
4	Գետավան	գ. Գետավան	104	303
5	Դրմբուն	գ. Դրմբուն	113	646
6	Զագլիկ	գ. Զագլիկ	55	223
7	Զարդախաչ	գ. Զարդախաչ	44	130
8	Թալիշ	գ. Թալիշ	148	565
9	Թբլղու	գ. Թբլղու	52	179
10	Խնկավան	գ. Խնկավան	66	194
11	Ծաղկաշեն	գ. Ծաղկաշեն	41	145
12	Ծմակահող	գ. Ծմակահող	67	238
13	Կիչան	գ. Կիչան	42	171
14	Կոճողոտ	գ. Կոճողոտ	155	560
15	Կուսապատ	գ. Կուսապատ	75	231
16	Հաթերք	գ. Հաթերք	473	1604
17	Հարությունագոմեր	գ. Հարությունագոմեր	122	522
18	Հովտաշեն	գ. Հովտաշեն	78	260
19	Ճանկաթաղ	գ. Ճանկաթաղ	105	271
20	Մատաղիս	գ. Մատաղիս	68	522

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության քվադրանկը առ 01.01.2010 թ., մարդ
21	Մաղավուզ	գ. Մաղավուզ	100	428
		գ. Քմբաձոր	26	108
22	Մեծ շեն	գ. Մեծ շեն	99	334
23	Մեհմանա	գ. Մեհմանա	12	25
24	Մոխրաթաղ	գ. Մոխրաթաղ	104	329
25	Ներքին Հոռաթաղ	գ. Ներքին Հոռաթաղ	266	813
26	Նոր Այգեստան	գ. Նոր Այգեստան	54	164
27	Նոր Կարմիրավան	գ. Նոր Կարմիրավան	22	108
28	Նոր Հայկաջուր	գ. Նոր Հայկաջուր	22	89
29	Նոր Ղազանչի	գ. Նոր Ղազանչի	36	128
30	Նոր Մարաղա	գ. Նոր Մարաղա	122	400
31	Նոր Սեյսուլան	գ. Նոր Սեյսուլան	39	155
32	Շահմասուր	գ. Շահմասուր	40	126
33	Չափար	գ. Չափար	94	308
34	Չլդրան	գ. Չլդրան	172	518
35	Պողոսագոմեր	գ. Պողոսագոմեր	55	173
		գ. Ղազարահող	18	60
36	Վաղուհաս	գ. Վաղուհաս	180	680
37	Վանք	գ. Վանք	364	1512
		գ. Անձավներ	4	8
		գ. Դաշտագլուխ	4	6
		գ. Ծաղկունք	2	2
		գ. Ծրագ	4	7
		գ. Նարեշտար	2	2
38	Վարդաձոր	գ. Վարդաձոր	53	194
39	Վարնկաթաղ	գ. Վարնկաթաղ	28	78
40	Վերին Հոռաթաղ	գ. Վերին Հոռաթաղ	140	515
41	Տոնաշեն	գ. Տոնաշեն	29	86
42	Քոլատակ	գ. Քոլատակ	105	270
	Նոր Ջրաբերդ*	գ. Նոր Ջրաբերդ	31	78

*) Համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ օրենքի համայնքի կարգավիճակ չունի:

ԼՂՀ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Մարտունի



Տարածքը	951.16 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	8.3%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հունիսի 1-ի դրությամբ)	71770.73 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	35

Գյուղական բնակավայրեր	37*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	23435 մարդ
այդ թվում՝ քաղաքային	5352 մարդ
գյուղական	18083 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	22.8%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ. վերջին	16.6%

ԼՂՀ Մարտունու շրջանը զբաղեցնում է երկրամասի տարածքի հարավարևելյան մասը: Մյուս վարչական շրջանների համեմատությամբ այս շրջանը համեմատաբար հարթավայրային է: Գրավում է պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա գավառի մի մասը:

Շրջանի արևմտյան կեսը նախալեռնային է, թույլ թեքություն ունեցող մակերևույթ ունի, այստեղի կլիմայական պայմաններն առավել նպաստավոր են գյուղատնտեսության համար:

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

Մարտունու շրջանի տարածքով հոսող գետերից համեմատաբար ջրառատը Վարանդան է՝ իր Ամարաս վտակով: Այն թափվում է Արաքս գետը: Մյուս գետերից համեմատաբար նշանավորը Խոնաշենն է, որն սկիզբ առնելով Բովուրխանի լեռնալանջերից, անցնում է Մարտունի քաղաքով և կորչում՝ Արցախի հարթավայրում:

Մարտունու շրջանի բնության հրաշալիքները հիշատակելիս անհնար է չնշել հանրահայտ սոսենու (դարաբաղցիներն անվանում են «տնջրե») մասին: Դա, հիրավի, բնական եզակի հրաշալիք է և մասնագետների գնահատմամբ՝ նախկին Խորհրդային Միության տարածքում գտնվող ամենատարեց ծառը (տարիքը՝ ավելի քան 2000 տարի): Հիմքում ծառաբնի շրջագիծը ավելի քան 27մ է, բարձրությունը՝ 54մ:

Մարտունու շրջանի ընդերքը հարուստ է կրաքարի, բազալտի, մարմարի, գրանիտի, կավի պաշարներով: Մարմարի պաշարներով հարուստ է Նորշեն, գրանիտի պաշարներով՝ Ննգի, կավի պաշարներով՝ Ննգի և Գավախան գյուղերի շրջակայքը:

Արևմտյան մասում շրջանը սահմանակից է Ասկերանի, հարավային մասում՝ Հաղրուքի շրջաններին, արևելյան ու հարավարևելյան մասերում՝ Ֆիզուլու, իսկ հյուսիսային մասում՝ Ադրամի շրջաններին:

Շրջանի տարածքում պահպանվել են հայկական պատմաճարտարապետական 353 հուշարձան, որոնցից առավել հնագույնը Ամարաս գետի ձախ ափին գտնվող Ամարասի վանքն է: Ամարասի վանքը Էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է IV դարի սկզբին՝ Գրիգոր Լուսավորչի, այնուհետև՝ նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսի կողմից: Վերջինս թաղված է Ամարասում: Վանքը եղել է ոչ միայն Արցախի կրոնական խոշոր կենտրոնը, այլև մշակութային, պաշտպանական, տնտեսական հզոր պատվարը: Մետրոպ Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ բացել է Հայաստանի այդ ընդարձակ նահանգի առաջին դպրոցը:

Շրջանի պատմաճարտարապետական մյուս հուշարձաններից նշանավոր են Ճարտար գյուղի Եղիշեի, Հերիեր գյուղի Ս.Գրիգորիս, Մավաս գյուղի վանքերը, Բերդաշենի ամրոցները, Մեծ Նահատակ, Ս. Աստվածածին եկեղեցիները, Հացի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին ու դպրոցի հին շենքը, Թաղավարդ գյուղի անտառածածկ սարի վրա գտնվող Գևորգյան անապատի հուշարձանները, Կաղարծի գյուղի Թարգմանչաց եկեղեցին և այլ հնություններ:

Մարտունու շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 16.6 %-ը:

2009թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում **Մարտունու շրջանի** տեսակարար կշիռը կազմել է 3.3 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 25.3%-ը, շինարարության՝ 13.1 %-ը, կապի ծառայություններից ստացված հասույթի՝ 6.4 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 10.6 %-ը, բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 7.8 %-ը:

Տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն է**: Շրջանը գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններից է: Ունի բազմաճյուղ գյուղատնտեսություն՝ հացահատիկի մշակություն, խաղողագործություն, այգեգործություն և պտղաբուծություն, անասնաբուծություն՝ իր բոլոր ենթաճյուղերով: Հանրապետության հացահատիկային մշակաբույսերի 24.2 %-ը, խաղողի համախառն բերքի 58.9 %-ը արտադրվում է շրջանում:

2002թ.-ից շրջանում գործունեություն է ծավալում «Լուսակերտ» ՍՊԸ թռչնաբուծական ֆաբրիկան:

Արդյունաբերության առաջատար ուղղությունը սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունն է:

Գյուղերից առավել խոշորներն են՝ Ճարտարը, Բերդաշենը, Գիշին, Սոսը, Թաղավարդը, Մաճկալաշենը, Խնուշինակը, Հերիերը, Աշանը, Քերթը:

2009թ. **շրջանում գործել** է 38 ցերեկային դպրոց, 1 երաժշտական դպրոց, 9 նախադպրոցական հիմնարկ, 1 գրադարան, 1 հիվանդանոց, 1 գյուղական տարածքային հիվանդանոց, 5 գյուղական բժշկական ամբուլատորիա, 31 բուժկետ և այլն:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Մարտունու շրջանում գործել են 381 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 315-ը անհատ ձեռնարկատերեր են:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	23435	11971	11464
Ծնվածներ, մարդ	451	202	249
Մահացածներ, մարդ	228	105	123
Ամուսնություններ	148	X	X
Ամուսնալուծություններ	12	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	37.6	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	613	292	321
հանրակրթական	3602	1752	1850
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	136	92	44
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	50896
Մարզիկներ, մարդ	317	71	246
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված),մարդ	56	51	5
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	6112
Հաճախումների քանակը տարվա ընթացքում, հազար			
գրադարան	22686
համերգ	3168
թանգարան	230
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը,տարվա ընթացքում	64

Մարտունի քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է 1924 թվականից, որն 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 5352 բնակիչ: Մինչև 19-րդ դարի սկիզբը այս բնակավայրը կոչվել է Խոնաշեն, կարճ ժամանակահատվածով՝ Նիկոլակևա, այնուհետև կրկին Խոնաշեն,

իսկ 1925թ., Մարտունի հեղափոխական ծածկանունը կրող Ա.Մյասնիկյանի մահից հետո, Մարտունի:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010թ., մարդ
1	Մարտունի	ք. Մարտունի գ.Քաջավան	1521 21	5352 77

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010թ., մարդ
1	Աշան	գ.Աշան	137	623
2	Ավդուռ	գ.Ավդուռ	35	133
3	Բերդաշեն	գ.Բերդաշեն	422	1558
4	Գիշի	գ.Գիշի	359	1206
5	Եմիշճան	գ.Եմիշճան	50	170
6	Զարդանաշեն	գ.Զարդանաշեն	28	93
7	Թաղավարդ	գ.Թաղավարդ	357	1286
8	Խերխան	գ.Խերխան	32	138
9	Խնուշինակ	գ.Խնուշինակ	131	659
10	Ծովատեղ	գ.Ծովատեղ	37	161
11	Կաղարծի	գ.Կաղարծի	86	246
12	Կարմիր շուկա	գ.Կարմիր շուկա գ.Սխտորաշեն	278 5	1010 36
13	Կոլխոզաշեն	գ.Կոլխոզաշեն	72	270
14	Հաղորտի	գ.Հաղորտի	50	178
15	Հացի	գ.Հացի	63	239
16	Հերիեր	գ.Հերիեր	140	655
17	Կավահան	գ.Կավահան	27	82
18	Ղուզե ճարտար	գ.Ղուզե ճարտար	444	1802
19	Ճարտար	գ.Ճարտար	703	2315
20	Մաճկալաշեն	գ.Մաճկալաշեն	151	550
21	Մյուրիշեն	գ.Մյուրիշեն	44	155
22	Մամնա	գ.Մամնա	20	84
23	Մուշկապատ	գ.Մուշկապատ	108	368
24	Ննգի	գ.Ննգի	98	322
25	Նոր շեն	գ.Նոր շեն	80	338
26	Շեխեր	գ.Շեխեր	110	363
27	Պառավաթումբ	գ.Պառավաթումբ	39	122
28	Սարգսաշեն	գ.Սարգսաշեն	63	256
29	Սոս	գ.Սոս	234	1009
30	Սայիտակաշեն	գ.Սայիտակաշեն	87	341
31	Քարահունջ	գ.Քարահունջ	40	167
32	Քերթ	գ.Քերթ	148	551
33	Ջիվանի	գ.Ջիվանի	38	158
34	Վարանդա	գ.Վարանդա	18	99
35	Վազգենաշեն	գ.Վազգենաշեն	58	263

ԼՂՀ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք.Քարվաճառ



Տարածքը	1829.84 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	16.0 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	138693.06 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	51*
Գյուղական բնակավայրեր	15*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	3000 մարդ
այդ թվում՝ քաղաքային	650 մարդ
գյուղական	2350 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	21.7%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ. վերջին	2.1%

Արցախի ազատագրումից հետո 1999թ. նախկին Քելբաջարի շրջանի տարածքում ստեղծվեց **ԼՂՀ Շահումյանի վարչական շրջանը**:

Անանիա Շիրակացին և Մ. Խորենացին հիշատակում էին այդ վայրը Վայքունիկ անվամբ: XII-XIII դարերից այն հիշատակվում էր որպես Վերին Խաչեն, XVIII դարի կեսից՝ հայտնի էր Քոլան անվանմամբ: Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո այն ընդգրկված էր Ջիվանշիր գավառի մեջ մինչև խորհրդային իշխանության հաստատելը:

Շրջանի տարածքում է գտնվում է Լեռնային Ղարաբաղի համեմատաբար խոշոր՝ Թարթառ (նախկինում՝ Տրտու) գետի ակունքը:

Շահումյանի շրջանը մեծ հեռանկար ունի բարձրորակ հանքային ջրի բազայի վրա (Խատիսու-Տաքջուր հանքային աղբյուրների) կազմակերպելու կուրորտային ժամանակակից

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

համալիր, ինչպես նաև հանքային ջրերի հզոր գործարան, քանի որ այստեղի հանքային ջրի որակը նման է հանրահայտ Ջերմուկի ջրին:

Շահումյանի վարչական կենտրոնը Քարվաճառ քաղաքն է, որն ունի 650 բնակիչ: Ազատագրական պայքարի ժամանակ այս քաղաքը խիստ տուժել է: Այժմ այն վերականգնվում է: Շրջանը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Այստեղ են գտնվում Դադիվանքը և ճարտարապետական այլ համալիրներ:

Շահումյանի շրջանի ռելիեֆը լեռնային է, ինչը նպաստավոր է անասնաբուծության՝ հատկապես մանր եղջերավոր անասնաբուծության համար: Շրջանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են մեղվաբուծության զարգացման համար:

Շահումյանի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչություն ընդհանուր թվաքանակի 2.1 %-ը:

Տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն է:** Շրջանը առավել մասնագիտացված է անասնաբուծությամբ:

2009թ. հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում **Շահումյանի շրջանի** տեսակարար կշիռը կազմել է 2.5 %-ը, շինարարության ծավալում՝ 2.0%-ը, մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքում՝ 1.2%-ը, բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում՝ 0.2 %-ը:

2009թ. **շրջանում գործել** է 16 ցերեկային դպրոց, 1 գյուղական տարածքային հիվանդանոց, 1 գյուղական բժշկական ամբուլատորիա, 14 բուժկետ և այլն:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	3000	1351	1649
Ծնվածներ, մարդ	77	32	45
Մահացածներ, մարդ	18	3	15
Ամուսնություններ	24	X	X
Ամուսնալուծություններ	-	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	23.6	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
հանրակրթական	576	259	317
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	4149
Մարզիկներ, մարդ	107	23	84
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	18

2010թ. հունվարի 1-ի դրությամբ **Շահումյանի շրջանում գործել** են 36 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 33-ը անհատ ձեռնարկատերեր են:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Քարվաճառ	ք.Քարվաճառ	141	650

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Եղեգնուտ	գ.Եղեգնուտ	43	183
2	Զուար	գ.Զուար	22	76
3	Ծար	գ.Ծար	13	58
4	Հավասթաղ	գ.Հավասթաղ	18	71
5	Նոր Բրաթուր	գ.Նոր Բրաթուր	47	203
6	Նոր Վերին շեն	գ.Նոր Վերին շեն	54	255
7	Չարեքտար	գ.Չարեքտար	45	196
8	Ակնաբերդ	գ.Ակնաբերդ	135	528
9	Դադիվանք	գ.Դադիվանք	27	101
10	Նոր Էրբեջ	գ.Նոր Էրբեջ	25	120
11	Նոր Կարաչինար	գ.Նոր Կարաչինար	22	86
12	Նոր Մանաշիդ	գ.Նոր Մանաշիդ	19	79
13	Խարխափուտ	գ. Խարխափուտ	19	107
14	Քնարավան	գ.Քնարավան	15	71
15	Նոր Գետաշեն	գ.Նոր Գետաշեն	49	216

ԼՂՀ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Շուշի



Տարածքը	381.33 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	3.4%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	12593.35 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	6
Գյուղական բնակավայրեր	8*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	5126 մարդ
այդ թվում՝ քաղաքային	3880 մարդ
գյուղական	1246 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	75.7%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ.վերջին	3.6%

ԼՂՀ Շուշիի շրջանը զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի հարավարևմտյան փոքր հատվածը՝ Ղարաբաղի լեռնաշղթայի կենտրոնական մասը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամենափոքր շրջանն է: Հյուսիսային և արևելյան մասում սահմանակից է Ասկերանի շրջանին, հարավային մասում՝ Հաղրուբի շրջանին, իսկ արևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջանին:

Շրջանի մակերևույթն ամբողջապես լեռնային է, որը գերազանցապես ծածկված է անտառներով և թփուտներով: Նրա հարավային հատվածում է գտնվում Մեծ Քիրս լեռը, որի բարձրությունը 2725 մ է: Շրջանի տարածքով է անցնում Կարկառ գետն իր վերին հոսանքով, որն այստեղ ունի բազմաթիվ արագահոս վտակներ: Դրանք բոլորն էլ հոսում են գեղատեսիլ, անդնդախոր կիրճերով, որոնցից հատկապես հիշարժան է Շուշի քաղաքի մոտ գտնվող կիրճը:

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

Այս փոքր տարածք ունեցող շրջանում կա 152 հայկական պատմաճարտարապետական հուշարձան: Դրանց զգալի մասը գտնվում է Շուշի քաղաքում:

Շուշիի շրջանի գյուղական բնակավայրերից խոշորը Քարին տակ գյուղն է, որն Արցախի հնագույն բնակավայրերից է՝ հարուստ պատմական անցյալով: Գտնվում է Շուշի քաղաքից 2 կմ հեռավորության վրա՝ Կարկառ գետի ձախ ափին, այդ գետի անդնդախոր կիրճի զառիթափ քարաժայռի ստորոտում: Տեղանքը շատ բարդ է, բայց նաև յուրահատուկ գեղեցկություն ունի, օդն ու ջուրը մաքուր են: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, կամուրջներ, ջրաղացներ, քարանձավային շինություններ: Այդ քարանձավներից մեկի վերաբերյալ, որը գտնվում է գյուղի հյուսիսային մասում, հետաքրքիր տվյալներ է բերված Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի «Արցախ» գրքում: Հեղինակը նշում է, որ այդ քարայրի մուտքը կլոր է, դժվար անցանելի, քարայրը խորն է, սուկալի մութ և բավականին երկար, որի ծայրը հասնում է համարյա թե մինչև Շուշիի տակը: Նա նշում է նաև, որ առանց լապտերի անհնար է մտնել և առաջ գնալ: Քարայրի խորքում ջուր կա:

Շրջանի մյուս բնակավայրերից նշանավոր է փառավոր պատմություն ունեցող Բերդաձորի հովտի Հինշեն գյուղը (որը խորհրդային իշխանության տարիներին անվանվել է Կիրով): Հինշենը (ինչպես նաև պատմական Արցախի Բերդաձոր գավառի Մեծշեն գյուղը) երբեմն հենց այդպես էլ անվանվում է՝ Բերդաձոր: Այն առավել հին պատմություն ունեցող բնակավայր է, հերոսաբար պաշտպանվել է պարսկական, թաթար-մոնղոլական, թուրքական զորքերի հաճախակի հարձակումներից: Այդ հերոսական գյուղը 1988թ. սկզբից մինչև 1992թ. մայիսի 9-ը, այսինքն՝ մինչև Շուշի քաղաքի լրիվ ազատագրումը, պաշտպանվում էր աղբրեջանական հրոսակների ամենօրյա հարձակումներից:

Գյուղի շրջակայքում նշանավոր են Սահակ աղբյուրը, Ներքին ջուրը, Դուշի մանրը, Դգեսիան դուզեն, Դմբկաց անտառները, Դաքած հող, Թումա սեռ արոտավայրերը:

Շուշիի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 3.6 %-ը:

2009թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Շուշիի շրջանի տեսակարար կշիռը կազմել է 0.3 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 1.6 %-ը, շինարարության ծավալի՝ 7.3 %-ը, կապի ծառայություններից ստացված հասույթի՝ 3.2 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 2.6 %-ը, բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 3.3%-ը:

2009թ. **շրջանում շահագործման են հանձնվել** 7505.7 քառ. մետր ընդհանուր (օգտակար) մակերեսով 72 բնակարան և առանձնատուն:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնաբուծությունն է: Արդյունաբերությունը որոշ չափով զարգացած է Շուշի քաղաքում:

2009թ. շրջանում գործել է 9 ցերեկային դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 հիվանդանոց, 6 բուժկետ և այլն:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Շուշիի շրջանում գործել են 89 տնտեսավարող սուբյեկտ, որից՝ 54 անհատ ձեռնարկատեր:

ՇՈՒՇԻ ԵՐԶԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ԸԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	5126	2682	2444
Ծնվածներ, մարդ	91	39	52

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Մահացածներ, մարդ	28	15	13
Ամուսնություններ	28	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակվածներեսով, քառ. մ	43.6	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադարձական	151	74	77
հանրակրթական	784	393	391
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	162	86	76
միջին մասնագիտական	276	203	73
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	7372
Մարզիկներ, մարդ	239	27	212
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	87	80	7
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	900
Հաճախումների քանակը տարվա ընթացքում, հազար			
գրադարան	3700
թատրոն	1308
համերգ	8324
թանգարան	807
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	57

Շուշի քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է, որն 2010թ. հունվարի 1-ին ունի 3880 բնակիչ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Շուշի	ք.Շուշի	1419	3880

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Եղցահող	գ. Եղցահող գ. Կանաչ թալա	36 5	138 12

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության քվադրանակը առ 01.01.2010 թ., մարդ
		գ. Տասր Վերստ	4	6
2	Լիսագոր	գ. Լիսագոր	28	128
3	Հինշեն	գ. Հինշեն	49	164
4	Սեծ շեն	գ. Սեծ շեն	33	106
5	Քարին տակ	գ. Քարին տակ	155	629
6	Քիրսավան	գ. Քիրսավան	11	63



ԼՂՀ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ

Շրջկենտրոնը՝ ք. Բերձոր

Տարածքը	3376.57 քառ. կմ
ԼՂՀ տարածքում շրջանի տարածքի տեսակարար կշիռը	29.5%
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2010թ. հուլիսի 1-ի դրությամբ)	151592.40 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	49
Գյուղական բնակավայրեր	89*
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	7788 մարդ
այդ թվում՝ քաղաքային	2387 մարդ
գյուղական	5401 մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	30.6%
ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակում շրջանի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009 թ.վերջին	5.5%

Արցախի ազատագրումից հետո, 1994թ. հուլիսին նախկին Լաչինի շրջանի տարածքում ստեղծվեց Քաշաթաղի վարչական շրջանը: Ամբողջապես հայերով բնակեցված Արցախի անբաժանելի մասը հանդիսացող այդ տարածքը՝ 1920-ական թվականների սկզբներին, երբ Արցախը բռնակցվել էր Ադրբեջանին, հայաթափվում էր, բնակեցվում քրդերով, իսկ հետո՝ թուրք-ազերիներով և որպես առանձին վարչական շրջան մտցվում ոչ թե ԼՂԻՄ-ի, այլ անմիջապես Ադրբեջանի կազմի մեջ: Այդպիսով, այդ նեղ շերտով ամբողջապես հայաբնակ ԼՂԻՄ-ը անջատվեց մայր Հայաստանից: Ահա այդ տոհմիկ հայկական տարածքում էլ ձևավորվեց այժմյան Քաշաթաղի շրջանը:

Քաշաթաղի շրջանն ընդգրկում է հայկական պատմական Հազարու գետի միջին և վերին ավազանը:

*) Ժողովածուի մեջ ներկայացված են բնակեցված բնակավայրերը.

Քաշաթաղի շրջանի ռեյինֆը լեռնային է, մակերևույթը՝ խիստ կտրտված: Հյուսիսային մասը հարում է Ղարաթաղի (կամ Սյունիքի) հրաբխային բարձրավանդակին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հագարու գետի ու նրա աջակողմյան վտակ Աղավնոգետի հովիտները, որտեղ էլ տեղաբաշխված են շրջանի բնակավայրերի մեծ մասը: Այս գետերը բավականին ջրառատ են և վճռական դեր են խաղում շրջանի այգեգործության, պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման համար:

Կլիմայական պայմանները չոր մերձարևդարձային են: Քանի որ տարածքի մեծ մասը լեռնային է ու խիստ կտրտված, շատ վայրերում քիստաձևով, ապա հողագործության համար նպաստավոր պայմաններ ունեն միայն նշված գետերի նեղ հովիտները: Սյուս, ընդարձակ տարածքները, մանավանդ բարձրադիր վայրերը նպաստավոր են անասնապահության, հատկապես մանր եղջերավոր անասնապահության համար:

Քաշաթաղի շրջանը մայր Հայաստանը Արցախի հետ կապող կարևորագույն օղակն է: Շրջանի դերը անգնահատելի է հատկապես այն առումով, որ նրա տարածքով է անցնում «Արցախի կյանքի ուղին», այն ավտոմայրուղին, որը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով և որի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1998թ. սեպտեմբերի 2-ին՝ Լեռնային Ղարաթաղի Հանրապետության անկախության հռչակման օրվա տարեդարձին:

Քաշաթաղի շրջանի բնակչությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 5.5%-ը:

Քաշաթաղի շրջանի տեսակարար կշիռը 2009թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 0.8 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքում՝ 14.9 %-ը, շինարարության ծավալում՝ 1.9 %-ը, կապի ծառայություններից ստացված հասույթի՝ 2.8 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 3.7 %-ը, բնակչությանը մատուցված ծառայությունների մեջ՝ 2.1 %-ը:

Քաշաթաղի շրջանն ունի տնտեսության զարգացման համար լայն հնարավորություններ և բնական նպաստավոր պայմաններ՝ հացահատիկային մշակաբույսերի արտադրության, պտղաբուծության և բանջարաբոստանային տնտեսության զարգացման համար:

2009թ. **շրջանում գործել է** 47 ցերեկային դպրոց, 2 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 2 թանգարան, 2 գյուղական հիվանդանոց, 3 գյուղական բժշկական ամբուլատորիա ,57 բուժկետ և այլն:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Քաշաթաղի շրջանում գործել են 114 տնտեսավարող սուբյեկտ, որոնցից՝93 անհատ ձեռնարկատեր:

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	7788	3874	3914
Ծնվածներ, մարդ	202	91	111
Մահացածներ, մարդ	34	13	21
Ամուսնություններ	128	X	X
Ամուսնալուծություններ	10	X	X

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
Մեկ բնակչի ապահովվածությունը ընդհանուր բնակմակերեսով, քառ. մ	28.6	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	80	52	28
հանրակրթական	1402	675	727
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	221	146	75
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	10925
Մարզիկներ, մարդ	152	39	113
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	103	85	18
Սոցիալական ապահովության ոլորտ՝			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	614
Հաճախումների քանակը տարվա ընթացքում, հազար			
գրադարան	6990
համերգ	1125
թանգարան	4695
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	47

Բերձոր քաղաքը շրջանի վարչական կենտրոնն է 1656 բնակչով: Բերձորը գտնվում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղու վրա, Հազարու գետի ձախ ափին, Ղարաբաղի լեռնաշղթայի հարավ-արևմտյան թփուտածածկ լեռնալանջի վրա: 1990-ական թվականների սկզբին տեղի ունեցած ազգային ազատագրական պատերազմի ժամանակ այս քաղաքը խիստ տուժել է, տների մեծ մասը ավերվել է: Այժմ այն շարունակվում է վերականգնվել, բարեկարգվել: Այստեղ գործում են դպրոցներ, մշակույթի և առողջապահության օջախներ: 1998թ. մայիսին քաղաքի կենտրոնում, Գորիս-Ստեփանակերտ մայրուղու աջ մասում շահագործման է հանձնվել բազալտակերտ Ս. Համբարձում եկեղեցին:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Բերձոր	ք.Բերձոր	476	1656
2	Կովսական	ք.Կովսական գ.Դիցմայրի գ.Կերեն գ.Քարատակ	110 19 17 4	407 55 47 12

ՀՀ	Քաղաքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
3	Սիջնավան	ք.Սիջնավան	94	324

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
1	Ալաշկերտ	գ.Ալաշկերտ	27	104
2	Աղածոր	գ. Աղածոր	26	101
3	Աղանուս	գ. Աղանուս գ. Ապարան գ.Մեղվածոր	9 4 3	37 20 8
4	Աղավնատուն	գ. Աղավնատուն գ. Խաչգետիկ գ.Հարար	7 7 5	23 27 17
5	Աղավնո	գ. Աղավնո	42	128
6	Այգեհովիտ	գ. Այգեհովիտ գ. Լճաշեն	38 3	135 13
7	Այգեկ	գ. Այգեկ	24	85
8	Արախիշ	գ.Արախիշ գ.Գահանիստ գ.Հայթաղ գ.Մոմսեսաշեն գ.Վազգենաշեն գ.Քարաբակ	8 2 3 5 3 2	26 2 7 17 7 4
9	Արծվաշեն	գ. Արծվաշեն գ. Մխանց	32 22	92 73
10	Արտաշավի	գ. Արտաշավի	25	84
11	Գանձա	գ. Գանձա գ. Բազմատուս	9 1	40 4
12	Գետամեջ	գ. Գետամեջ	23	79
13	Գետափ	գ. Գետափ	27	101
14	Գողթանիկ	գ. Գողթանիկ	19	79
15	Դրախտածոր	գ. Դրախտածոր	11	36
16	Եզնագոմեր	գ. Եզնագոմեր գ. Շրվական գ. Սպիտակաջուր	13 8 8	49 27 28
17	Երիցվանք	գ. Երիցվանք գ. Կրմեն	53 7	175 23
18	Իշխանածոր	գ. Իշխանածոր	50	155

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության քվադրանակը առ 01.01.2010 թ., մարդ
19	Ծաղկաբերդ	գ. Ծաղկաբերդ գ. Մարաթուկ	58 5	211 14
20	Ծիծեռնավանք	գ. Ծիծեռնավանք գ. Մելիքաշեն գ. Տանձուտ	28 13 27	111 49 81
21	Ծոբաձոր	գ. Ծոբաձոր գ. Որդուակ	7 5	18 24
22	Կումայրի	գ. Կումայրի գ. Շիրակ	13 9	52 49
23	Հակ	գ. Հակ	17	46
24	Հակարի	գ. Հակարի	33	104
25	Հայկազյան	գ. Հայկազյան գ. Ջանֆիդա	19 12	78 41
26	Հոչանց	գ. Հոչանց	15	56
27	Չորափ	գ. Չորափ	27	80
28	Ղազարապատ	գ. Ղազարապատ	14	64
29	Մամարք	գ. Մամարք գ. Հալե	17 11	63 38
30	Մարտունաշեն	գ. Մարտունաշեն	15	54
31	Միրիկ	գ. Միրիկ	46	144
32	Մշենի	գ. Մշենի գ. Արվական	23 11	78 42
33	Մոշաթաղ	գ. Մոշաթաղ գ. Հերիկ գ. Բերդիկ	49 3 8	183 11 26
34	Մուշ	գ. Մուշ	23	78
35	Նորաշենիկ	գ. Նորաշենիկ	18	93
36	Շալուա	գ. Շալուա գ. Հիմնաշեն գ. Վերին շեն գ. Քարուտ	10 5 4 1	29 33 12 5
37	Սարատակ	գ. Սարատակ	32	103
38	Սոնասար	գ. Սոնասար գ. Մարգիս	20 2	74 8
39	Ներքին Սուս	գ. Սուս գ. Գիհուտ գ. Ուրմիա գ. Ներքին Սուս	11 12 2 25	30 45 6 92
40	Վակունիս	գ. Վակունիս գ. Խաչին Տափ	12 1	44 3
41	Վաղազին	գ. Վաղազին գ. Մարտիրոս	11 1	51 1
42	Վան	գ. Վան	30	119

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Բնակչության թվաքանակը առ 01.01.2010 թ., մարդ
43	Վարդաբաց	գ. Վարդաբաց	21	70
		գ. Քարոտան	15	49
44	Վուրգավան	գ. Վուրգավան	35	131
45	Տիգրանավան	գ. Տիգրանավան	39	153
46	ՈՒռեկան	գ. ՈՒռեկան	40	148
47	Փակահան	գ. Փակահան	34	125
48	Քաշունիք	գ. Քաշունիք	13	52
		գ. Մորաջուր	1	5
		գ. Վերին Քաշունիք	8	20
49	Քարեգահ	գ. Քարեգահ	50	185